

ԲԱՌԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ

Գ.Բ.ԹՈՍՈՒՆՅԱՆ

Հայ բառարանագրությունների հիմքերը դրվել են Հայ մատենագրության զարգացման հետ միաժամանակ, այն է՝ V դ. 30 - 40-ական թվականներից սկսած: Գրերի գյուտից երկու-երեք տասնամյակ անց Հայաստանում բուռն զարգացում է ապրում թարգմանական և ինքնուրույն մատենագրությունը: Հայտնի է, որ առաջինը թարգմանվում է Աստվածաշունչը, որի թարգմանությունը ընթացքում օտար (եբրայերեն, հունարեն, ասորերեն) և զգալի հասկանալի բազմաթիվ բառեր բացատրվել կամ թարգմանվել են տվյալ բառի կողքին: Նման բացատրությունների ավելի հաճախ հանդիպում ենք Աստվածաշնչի Յովթանասնից բնագրից կատարված թարգմանության մեջ: Օրինակ՝ «Եւ ոչ կոչեսցի այսուհետեւ անուն քո Աբրամ, այլ եղիցի անուն քո Աբրահամ, զի Հայր ազգաց բազմաց եղի զքեզ»¹, այստեղ Աբրահամ անունը թարգմանված է «ազգերի Հայր»:

«Եւ ածեն զնա ի Գողգոթա, տեղի մի, որ թարգմանի տեղի կառափելոյ»², որտեղ գողգոթա բառը նշանակում է «կառափնարան, գլխատման տեղ»:

Նման բացատրությունների (եբրեմյն էլ ստուգաբանությունների) հանդիպում ենք ոչ միայն Աստվածաշնչում, այլ նաև V և հետագա դարերի մեր մատենագիրների երկերում, ինչպես, օրինակ՝ «Վասն որոյ կարծի՝ թէ էր ինչ ընդ նմա, որում հիւղն անուն էր, որ է նիւթ»³, որտեղ հունարեն *նիդ* գոյականը թարգմանված է «նյութ»:

Մ. Խորենացին իր պատմության երկրորդ գրքի 10 գլուխը վերնագրել է. «Թէ որպէս շինեաց զԲագարան քաղաք կոտց», որտեղ բագարան բառը և՛ բացատրված է, և՛ ստուգաբանված:

Մինչև X դ. Հայ բառարանագրությունն ունեցել է միայն գործնական նպատակ: Դրանով էլ պայմանավորված՝ այս կամ այն երկի օտար և անհասկանալի բառերի բացատրությունները տրվել են բնագրում՝ բառի կողքին, ավելի ուշ՝ լուսանցքում, է՛լ ավելի ուշ՝ գրքի վերջում: Դա նշանակում է, որ մինչև այդ դարը բառի իսկական առումով բառարաններ չեն եղել, այլ եղել են բառացանկեր: Դրանից հետո մեր ձեռագրերում հանդես են գալիս տարբեր տեսակի բառարաններ⁴: Այնուհետև կազմվում են թարգմանական բառարաններ՝ Հայերեն-լատիներեն, լատիներեն-Հայերեն, որոնցից հիշատակության արժանի են Ֆրանչիսկո Ռիվոլայի «Բառագիրք Հայոց» (Միլան, 1621, Փարիզ, 1633), Կղեմես Գալանոսի «Բառգիրք ամենայն իմաստասիրական բառից Հայոց և լատինացւոց» (Հռոմ, 1645), Աստվածատուր Ներսեսովիչի «Բառգիրք լատինացւոց և Հայոց» (Հռոմ, 1695) աշխատանքները: Մեր ձեռագիր և առաջին թարգմանական բառարանները

¹ Մենդ., Ժէ, 5-6:

² Մարկ. Ժե, 22:

³ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, մաս 1-ին, Բ:

⁴ Տե՛ս Հ.Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (V-XV դդ.), Ե., 1966, (XVI-XVII դդ.), Ե., 1971:

Հիմք են դառնում ավելի կատարելագործված բառարաններ կազմելու համար, որպիսիք եղան Երեմիա Մեղրեցու, Մխիթար Սեբաստացու և այլոց բառարանները:

«Բառգիրք Հայոց»-ում⁵ բառերը Հիմնականում բացատրված են Հոմանիչների թվարկմամբ, չատ քիչ գլխաբառեր բացատրված են նկարագրական եղանակով, օրինակ՝

Զաղատ - նշանակ զատական, որ կոչի գիծ յերկայն ծրեալ. եւ լայնն մակերեւութիւն մարմին:

Քստմնելի - սոսկալի, կամ դողալի, կամ զարմանալի, կամ ահեղալի:

XVIII-րդ. կեսերից հանդես են գալիս բացատրական, թարգմանական բառարաններ, որոնք բառապաշարի ընդգրկմամբ և իրենց կազմության սկզբունքներով նոր փուլ են բացում Հայ բառարանագրության պատմության մեջ: Գրաբարի առաջին ընդարձակ բացատրական բառարանը Մխիթար Սեբաստացու աշխատանքն է⁶: Դա մեր առաջին կանոնարկող բառարանն է, որն ընդգրկում է գրաբարի գրեթե ամբողջ բառապաշարը: Այդ բառարանում գլխաբառից հետո տրված են թեքվող բառերի Հոլովման և խոնարհման քերականական կարգերը, բառիմաստի բացատրությունը, բարբառային («ոսմկօրէն»), երբեմն էլ թուրքերեն (Հայաստառ նոտրգրով) համարժեքները, որոշ դեպքերում նշված են նաև աղբյուրները:

Մ.Սեբաստացու բառարանը գրաբարի լավագույն բացատրական բառարաններից մեկն է, որն ուղի բացեց հետագայում. ավելի կատարյալ բառարաններ կազմելու համար: Մխիթարյան երեք վարդապետներ կազմում են գրաբարի երկհատոր նոր բառարան⁷, որը մինչև օրս համարվում է Հայ բառարանագրության թագն ու պսակը: Դրանում բառահոգովածները մշակված են ավելի բարձր մակարդակով. նախ քերականորեն բնութագրված է ամեն մի գլխատառ, այսինքն՝ նշված են բառերի խոսքիմասային պատկանելությունը և քերականական կարգերը, այնուհետև բերված են Հունարեն, լատիներեն, թուրքերեն, երբեմն էլ պարսկերեն, արաբերեն, ֆրանսերեն համարժեքները, տարբերակված ու բացատրված են իմաստներն ու նրբիմաստները, որոնք հաստատված են բնագրային վկայություններով: Բառաբացատրությունները տրված են տարբեր եղանակներով՝ նկարագրությամբ, Հոմանիչների թվարկմամբ, օտար լեզուներով թարգմանությամբ, հղումներ կատարելով և այլն: Բազմաթիվ բառեր նաև ստուգաբանված են: Բնագրային վկայությունները Հիմնականում տրված են ժամանակագրական Հաջորդականությամբ: Առանձնացված են համանուն բառերը, ինչպես նաև տվյալ գլխաբառով կազմված հարադրությունները: Այդ հատկանիշների Հիման վրա այդ բառարանը ոչ միայն կանոնարկող բացատրական, այլ նաև ուղղագրական, բազմալեզվյան, ստուգաբանական, դարձվածաբանական, Հոմանիչների բառարան է, որը Հիմք և օրինակ է դարձել հետագա մեր բոլոր բառարանների համար:

Հետագայում չատերն են փորձել կազմել ՆՀԲ-ի նման բառարան և կազմել են, բայց ՆՀԲ-ն մինչև օրս իր տեսակով մնացել է անգերազանցելի:

⁵ Երեմիա Մեղրեցի, Բառգիրք Հայոց, Ալիկոռնա, 1698, Կ.Պոլիս, 1728, ե., 1975:

⁶ Մ.Սեբաստացի, Բառգիրք Հայկազեան լեզուի, Հ. 1, Վենետիկ, 1749, Հ. 2, Վենետիկ, 1769:

⁷ Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմելյան, Մ. Ավգերյան, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836 - 1837:

Հետագա մեր բոլոր բառարանների բառապաշարի հիմքում հիմնականում ընկած է ՆՀԲ-ի բառացանկը: Բացի դրանից, դրա հիման վրա կազմվել են տարբեր տիպի բառարաններ:

Գրաբարյան նորագույն բառարաններից են Լ.Խաչատրյանի⁸ և Ռ. Ղազարյանի՝ գրաբար-աշխարհաբար բառարանները:

Լ.Խաչատրյանի բառարանը պարունակում է գրաբար մատենագրության մեջ գործածված շուրջ 4000 բառ, որոնք բառաքերականական իմաստով ու արժեքով լեզվի տարածամասնակյա կտրվածքում երկատվել են ու դուրս եկել խոսքիմասային հարացույցի շրջանակներից և հանդես եկել երկու ու ավելի խոսքիմասային իմաստների համատեղումով, օրինակ՝ Զանխուլ. ած. ծածուկ, գաղտնի, անհայտ, գ. ծածուկ տեղ, մկ. լուեյայն, լուռ ու մունջ, նախ. գաղտնի, մեկուսի:

Ռ. Ղազարյանի բառարանն ընդգրկում է V-XI դդ. գրաբար ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված բառերը: Դրանով իսկ նա տարբերվում է ՆՀԲ-ից, որովհետև վերջինս, ինչպես հայտնի է, պարունակում է V-XVII դդ. մատենագրության բառապաշարը: Դրանից զատ, Ղազարյանի բառարանում կան այնպիսի բառեր ու բառակապակցություններ, որոնք չեն արձանագրված ՆՀԲ-ում: Այս նոր բառարանի համար հիմնական սկզբնաղբյուր են եղել ՆՀԲ-ն և Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը»: Բայց բառարանագիրը չի սահմանափակվել միայն այդ երկու կարևոր սկզբնաղբյուրներով: Նա հարյուրավոր նոր բառեր է քաղել V-XI դդ. գրաբար մատենագրությունից: Սույն բառարանն ընդգրկում է շուրջ 49 հազար բառ ու բառակապակցություն: Դրանում տեղ են գտել բոլոր խոսքի մասերին պատկանող բառեր, ինչպես նաև բայանուններ, պատճառական բայեր, եղանակիչներ (միադիմի բայեր), ածականի և գոյականի իմաստով գործածված անցյալ և ենթակայական դերբայներ, նախածանցներ (աբտ, բաղ, գեր և այլն), դերանվանական և անկանոն հոլովում ունեցող թեք հոլովաձևեր, որոնք հղված են բառի ուղիղ ձևին, բառերի գրչագրական տարբերակներ:

Համանուն բառերը տրված են որպես առանձին գլխաբառեր, դարձվածաբանական միավորները՝ տվյալ բառակապակցության առաջին բաղադրիչի կամ գերադաս բառի տակ: Բայական այն հարադրությունները, որոնց առաջին բաղադրիչը չունի անկախ գործածություն, տրված են որպես գլխաբառեր՝ «առանձին անգործածական» նշումով, և ապա նոր տողից բերված են հարադրական կազմությունները:

Գլխաբառերը օժտված են քերականական, իմաստաբանական, գործառական-ոճական նշումներով ու բացատրություններով: Հրատարակչական ղեկարությունները հաշվի առնելով՝ հեղինակային վկայություններով վավերացված են միայն հազվադեպ գործածություն ունեցող կամ ընդհանուր գործածական բառերի մասնավոր նշանակությունները (տե՛ս, օրինակ՝ Ագատութիւն¹⁰, Ագնիւ, Ագուեստ, Աթինեալ, Ախտասեր, Ակնբաց գլխաբառերի տակ):

Հոլովվող բառերի համար սովորաբար նշվում են եզակի և հոգնակի սեռականի ձևերը, իսկ անեզակյան ու անհոգնական բառերի համար՝ միայն

⁸ Լ. Խաչատրյան, Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան, Ե., 1998:

⁹ Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), Հ. Ա, Բ, Ե., 2000:

¹⁰ Բառարանը տպագրված է հին ուղղագրությամբ:

սեռականի ձևը: Երբեմն նշվում են նաև Հոգնակի ուղղականի ձևերը, օրինակ՝ դաշն-դաշինք, ձեռն-ձեռք և այլն: Զուգահեռաբար նշվում են մեկից ավելի հոլովում ունեցող բառերի բոլոր հոլովումները, օրինակ՝ գահ, ու, ուց, և ի, ից, Լեզու, գուի, այց կամ գուոյ, ոց, Աղքատ, ի, այց. ոյ, ով և այլն:

Դերանունների համար բերվում են եզակի և Հոգնակի թվի բոլոր հոլովաձևերը: Բայերի համար որպես գլխաբառ տրվում է անորոշ դերբայը, իսկ ի լծորդություն բայերի համար փակագծում նշվում է սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի առաջին դեմքի վերջավորությունը. օրինակ՝ խօսել (իմ), բայի խոնարհման տիպը ցույց տալու նպատակով տրվում է անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքի վերջավորությունը:

Բառերի նշանակությունը հիմնականում բնորոշվում է երկու եղանակով՝ նկարագրական բացատրությամբ և հոմանիշների միջոցով, օրինակ՝ ԱՅԾ, Ի, Ից, գ. (կենդե.) 1. Մնամէջ եղջերաւորների ընտանիքին պատկանող որոճող կենդանի (Capra): 2. Սովորաբար այդ կենդանու ձագը: ԱԶԴԵԼ, եցի, ն.չ. 1. Իմաց տալ, տեղեկացնել, իրազեկ դարձնել, տեղեկ պահել, լուր տալ, յայտնել: 2. Ներգործել, ներգործություն ունենալ: 3. Դրդել, թելադրել, հրահրել, սաղրել: 4. Շարժել, շարժման մեջ դնել: 5. Զգացուել, զգալի լինել:

Մասնագիտական բառերի կամ տերմինների համար, հայերեն բացատրությունից բացի, տրվում է նաև լատիներեն գիտական անվանումը, օրինակ՝ ԿՆԻԻՆ, ոյ, ոց, գ. (բսբ.) Կնիւնագգիւնների ընտանիքին պատկանող ճահճային խոտաբույս (Juncus):

Փոխառյալ բառերի դեպքում փակագծում համառոտությամբ նշվում է փոխառու լեզուն. օրինակ՝ Ալեյուիա (յ) (եբր.), Ակատ (յուն.), Անագ (աբքադ.), Ազատ (պհլ.), Դամ (պրսկ.), Դամարի (ասոր.) և այլն:

Ղազարյանի բառարանը համեմատելով ՆՀԲ-ի հետ՝ նկատում ենք, որ դրանց բառապաշարի միջև կան զգալի տարբերություններ: Ինչպես նշվեց, ժամանակահատվածից և այդ դարերի բառապաշարից բացի, տարբերություն կա նաև բառացանկում: Այսպես, օրինակ՝ բառարանում կա ՆՀԲ-ում չարձանագրված շուրջ 430 բառ, որից 80-ը բառակապակցություններ են: Այդ բառերի մի մասը բառարանագիրը քաղել է Հր.Աճառյանի արմատական բառարանից, ինչպես, օրինակ՝ արիոն, ալախութել, խորակ, ծաղ, ծանծ, կանառանոց, կառ հարկանել, կարբ, հագագապահ, հեղեղաջուր, դեպտոն, նոնդել, մայրակնութիւն, մանձրել, յարագիւնեալ, յափրել, նախակ, նոյնադրամ, շանել, ողնուց, ուծութիւն, պատգբել, սահաւոր, վատակոխ, տղելութիւն, քաղցրախանդաղատ, քորայ, օրերեւակ և այլն:

Ռ.Ղազարյանը քաղել է նաև այնպիսի բառեր ու բառակապակցություններ, որոնք չկան նաև «Արմատականում», օրինակ՝ ագուեստ (խոր.), ամբայոյզ (Կղնկտ.), այլոցկերութիւն (Բուզ.), անկշոնութիւն (Ազաթ.), անվահան (Կղնկտ.), առատագուարթ (ն.տ.), արժանահատոյց (Նար.), աւետասքանչ (Կղնկտ.), բազմադաշն (ն.տ.), բաստեոն (Եղ.), գեղեցկաբոյս (Կղնկտ.), գրոխ (Արծր.), դարափլակ (Հովհ. կթ.), դիւապինդ (Կղնկտ.), երկաթահանութիւն (ն.տ.), թուանիկ (ն.տ.), ժողովրդակեցոյց (Փարպ.), լուսածնութիւն (Կղնկտ.), խաղնունք (Տիմ.

Կուզ.), խանձիր, (Ոսկ. Եփես.), խորեջք (Կղնկտ.), ծխակեր (ն.տ.), կահակիր (ն.տ.), կարմրիկ (խոր.), կենցաղակցել (Նար.), կիւնիկ (Սեբ.), կրակալից (Կղնկտ.) . համավար (ն.տ.), հրատոչոր (ն.տ.), ձայնստեղծել (Նար.), ճախրասլաց (Կղնկտ.), մեծահայց (ն.տ.), յոգնաբաստիկ (ն.տ.), նրանակոտոր (ն.տ.), շագոյր (Սեբ.), ոսկեխաչ (Կղնկտ.), ոսկեխնձոր (ն.տ.), ջերմախանդ (ն.տ.), սիգաւոր (ն.տ.), վասպուրական (=ազնվական, Սեբ.), տից (խոր.), փարշման (Արծր.), քանդակակերպ (Կղնկտ.), օտարախորթ (Եղ.) և այլն:

Ինչպես նշվեց վերևում, ԳԲ-ն Հարստացել է ավելի քան ութսուն բառակապակցությամբ, որոնք չկան ՆՀԲ-ում: Թվարկենք դրանցից մի քանիսը՝ ազդեցութիւն բնական // ազդումն բնական (Եզն.), այր գարամբ ելանել (խոր.), անկանել ընդ մահուամբ (Եզն.), անկանել ի բուռն (Դ.Անհաղթ), գարբանկութիւն հարկանել (Եզն.), արևուցուցանել (Եզն.). գրանս ի բերան դնել (Բուզ., Եղ.), բնական ազդեցութիւն (Եզն.), գութ արկանել (Եղ.), դիմադարձ լինել (ն.տ.), երգ ի բերան առնուլ (ն.տ.), զեղջ եւ ապաշաւ լինել (Եզն.), ի թիկունս ածել (Եզ.), խրախ առնել (Փարպ.), ծաղր եւ այլն առնել (Բուզ.), կենաց դեղ (Բուզ.). ձիւրնտիր առնել (Սեբ.), նախափախուստ լինել (Կղնկտ.), շերտաւոր փակել (Եղ.), վարակոխ գործել (Կղնկտ.), փաղանգ փաղանգ (Սեբ.) և այլն:

Շատ կարևոր ենք համարում նշել նաև այն, որ Ռ.Ղազարյանը ավելացրել է շուրջ յոթանասուն բառի նոր իմաստներ: Նշենք դրանցից մի քանիսը: Ազատութիւն - 6¹¹. Մեծահոգութիւն (Բուզ.), Ազնիւ - 4. Շատ լաւ, շատ ասլրես, կեցցես (Մատթ.), Ապակի - 3. Ապակէ շիշ, սրուակ (Եզն.), Բառնալ - 8. փխբ. Պարզել, բացայայտել (Բուզ.), Գուսան - 2. Նուազարան (Բուզ.), Զարդարեալ - 3. փխբ. Փառաւոր՝ սիրելի՝ հաճելի դարձնել, զեղեցկութեամբ՝ բարեմասնութեամբ օժտել (Կոր.), Կողոպտել - 2. Եցայ, կ. չ. Քայքայուել (դիակի), մերկանալ մսից (ոսկորների) (Բուզ.), Մածնուլ - 5. Պատուել, ծածկուել, պարուրուել (Եղ.), Յօդուած - 3. Շարադրանք (Նար.), Շողալ - 3. Երեւալ (Եզն.), Ովիտ¹² - 2. Այգի (խոր.), Պանունել - 2. Զմուսել (խոր.), Սեաւ - 2. փոխանունութեամբ՝ Սեւ ձի (խոր.), Տախտակ - 3. Մետաղեայ բարակ թիթեղաձեւ հարմարանք, որով պաշտպանում էին կուրծքն ու թիկունքը պատերազմի ժամանակ (խոր.), Տապել (իմ) - 2. Նեղուել, անհամբերութիւն ցուցաբերել՝ դրսեւորել (Բուզ.), Քաղհանել - 2. փխբ. Մաղկաքաղ անել (Եզն.) և այլն: Ի դեպ, այս բոլոր իմաստների համար նշված հեղինակներից բերված են բնագրային վկայություններ:

Օգտվելով բույսերի և կենդանիների անունների իր իսկ կազմած բազմալեզվյան բառարաններից՝ Ռ.Ղազարյանը իր բառարանում տվել է շուրջ 400 անվանումների լատիներեն համարժեքները: Օրինակ՝ անգղ -

¹¹ Նշվում են միայն նոր բառիմաստների թվահամարները:

¹² ՆՀԲ-ն այս գլխաբառն առհասարակ չունի:

Gups, արծուի - Aquila, արմաւենի - Phoenix, գազ - Astragalus
գլխաբառերը:

Ինչպես երևաց վերոհիշյալ շարադրնքից, բառարանագրությունը աստիճանաբար կատարելագործվել է թե՛ բառապաշարի ընդգրկման, թե՛ գլխաբառի բնութագրման և թե՛ բառահոգվածի մշակման տեսակետից: Ակնհայտ է, որ բառարանի կարևոր առանձնահատկություններից է նաև բոլոր բառիմաստների՝ բնագրային օրինակներով վավերացումը, դժբախտաբար այս գործընթացը և՛ անցյալում, և՛ մեր ժամանակներում հնարավոր չէ իրականացնել հրատարակչական միջոցների սղություն պատճառով:

ԳԲ-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՆՀԲ-ից հետո հրատարակված բառարանների շարքում ԳԲ-ն գրաբար-աշխարհաբար լավագույն բառարանն է, որն իրավամբ արժանացել է մասնագետների բարձր գնահատականին:

ИЗ ИСТОРИИ ЛЕКСИКОГРАФИИ

Г.Б.ТОСУНЯН

Резюме

Основы армянской лексикографии были заложены в V в. Начиная с X в. в наших манускриптах появляются разные словари. В 1698г. издается первый толковый словарь древнеармянского языка (грабара). За ним следуют «Словарь древнеармянского языка» (1749 – 1769), «Новый словарь древнеармянского языка» (1836 – 1837) и др. В наше время также составляются и издаются словари древнеармянского языка. Особо следует отметить «Словарь грабара» в двух томах (Ереван, 2000), составленный Р.С.Казаряном.

Изучение этих словарей показывает, что со временем принципы составления словарей совершенствовались.